

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.  
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.  
Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“. Կամ Тифлисъ, Редакция „Мшакъ“. Տ է լ է Ֆ օ ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.  
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատողին 10 կոպեկ.  
Տ է լ է Ֆ օ ն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Մի առաջարկի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գինեղալ-լէյտէնանտ Ի. Ն. Բէյտեր. Նամակ Ասիական. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր: ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կօնկորդատ:

## ՄԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԱՌԻԹՈՎ

Հայ-վրացական արձանագրութիւնները կովկասեան յանձնաժողովը, կիրակի, օգոստոսի 29-ին, նախագահութեամբ պրօֆեսոր Մառի, ունեցաւ մի նիստ, որտեղ քննուեց մի նոր հրատարակութեան հարց: Պրօֆեսոր Մառ ցանկութիւն յայտնեց, որ հայազիւտութեան և վրացազիւտութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնները համար հիմնովի մի այնպիսի հրատարակութիւն, ինչպիսին արդէն գոյութիւն ունի ներկայումս քիւզանդական ուսումնասիրութիւնները համար: Սյուլիսի հրատարակութիւնը թէ կարող էր լինել իր մէջ ամփոփել այն բոլոր պիտանական նիւթը, ինչ վերաբերում է հայազիւտութեան և վրացազիւտութեան և թէ կը ծառայէր իբրեւ մի օրգան ուսումնասիրութիւններ կատարողները համար: Պարունակելով իր մէջ հայազիւտութեան և վրացազիւտութեան վերաբերեալ գրականութեան մասին պարբերական տեղեկութիւններ, գետեղելով յօդուածներ նոր հետազոտութիւնները և ուսումնասիրութիւնները մասին, այդպիսի մի հրատարակութիւն կը նպաստէր թէ պատմական և թէ ազգագրական ու լեզուադիտական խնդիրները քննութեան և պարզաբանութեան:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԿՕՆԿՕՐԴԱՏ

(Մի պատմական ակնարկ)

I

Աշխարհը ակնհայտաբար է հանդիսանում մի հսկայական պայքարի: Կուր կէսը կատարվել է, կէսն էլ սպասվում է սեպտեմբերին: Ֆրանսիան է կուր բնով: Մարտնչողներն են հոգևոր և մարմնավոր իշխանութիւնները: Չեռնոցը նետով է մարմնավոր կամ բազալական իշխանութիւնը: Մի նոր, չը տեսնված բան է այդ կուրը: Դարեր ու դարեր գոյութիւն է ունեցել նա: Միայն այժմեան Եւրոպան չէ, որ աղմկում է նրանով: Բիւզանդիայի լայնածաւալ կայսրութիւնը, նոյն իսկ մուսուլման խաւար Արեւելքը վկայ են եղել նրա ազդեցութեանը: Ո՞վ պէտք է լինի երկրի իսկական վաւերը—անա այդ կուր իսկական իմաստը: Մի գաղափար է առհասարակ արեւելքում վերջի վերջոյ յաղթող է հանդիսացել կղերը և կազմվել է թէօկրատիա (ստատուապետութիւն): Միւս չի օրս էլ արեւելեան աշխարհը ճանաչում է թէօկրատիական վարչութեան ձևը: Խալիֆ, կրօնապետ, մարգարէի յաջորդ են համարում իրանց բոլոր մահմետական պետութիւնների գլուխները—Սուլթանը, Շահը, Ազգանները և միւրը և այլն: Արեւելքում միակ ըստապետութիւնը կազմում է Եւրոպայի: Բայց նա էլ միայն 1839 թիւց է մտել այդ նոր ուղին: Եւրոպական գաղափարն պետութիւնները գաղափարն չափերով լուծել են այդ խնդիրը: Ֆրանսիան չէ սիրում կէս-միջոցներ: Նա միշտ եղել է ռազիկալ, արմատական: Այս հարցում ևս նա ուղղում է ամեն ինչ արմատից կտրել, վերջնականապէս լուծել խնդիրը: Երկրի աշխարհական գործերն ամենին չը պէտք է կապ ունենան որ և է կրօնական հարցի: Կրօնաւորների կազմակերպութեան և կրօնական կամ կղերական իշխանութեան հետ:

Յանձնաժողովը համակրութեամբ ընդունեց առաջարկը և ցանկութիւն յայտնեց տեսնել այդ հրատարակութեան գաղափարը իրագործված առաջիկայ ձմեռվայ ընթացքում:

Սակայն մի գործնական հարց է առաջ գալիս, թէ արդեօք ի՞նչ միջոցներով պէտք է կամ կարելի է իրագործել այդպիսի մի հրատարակութիւն:

Անկասկած, կը գտնվեն հիմնարկութիւններ, ինչպէս, օրինակ, Պետերբուրգի Համալսարանը, Գիտութիւնների Ակադեմիան և Հնագիտական Կոմիտեան, որոնք կը տան մի որոշ օժանդակութիւն: Բայց զրանք բաւական չեն լինի և հարկաւորութիւն կը գաղափար լրացնել պակասը մասամբ բաժանորդագրութեամբ, իսկ մասամբ յատուկ նուիրատուութիւններով այդ նպատակով:

Բաժանորդագրութիւնը կարող է աշխուղել այն դէպքում, եթէ կատարվող ուսումնասիրութիւնները շօշափեն այնպիսի խնդիրներ, որոնք ունեն փոքր ի շատէ կարևոր նշանակութիւն մեր երկրի պատմական և ազգագրական ուսումնասիրութիւնների համար և կրում են իրանց վրա գրական մշակութեան և լայն քննական ոգու կնիք իրանց վրա:

Մենք, յամենայն դէպս, ուրախ կը լինենք, եթէ աշխուղել իրագործել մեր երկրի ուսումնասիրութեան վերաբերեալ այդ դիտաւորութիւնը, մասնաւորապէս որ մեր երկրի պատմական, աշխարհագրական և ազգագրական խնդիրները թէ և վաղուց շօշափված են, բայց լուրջ կերպով շատ չեն ուսումնասիրված:

Ով ինչ կրօնի ուղում է թող լինի: Դա կաւարտութեանը չէ վերաբերում: Միայն թէ կառավարութիւնը ոչ մի պարտականութիւն չունի չէ առնում կրօնի և կրօնաւորների վերաբերութեամբ: Հատարակութեան մէջ ամեն մի համայնք ինքնուրոյն կերպով պարտաւոր է տնօրինելու իր կրօնական գործերն ու ծախքերը: Նոյն իսկ կրօնի դաստաւորութիւնը դուրս է բշխում բոլոր պետական գործերից: Իսկ զպրոցները լինելու են բոլորն էլ պետական կամ պետութեան թոյլտուութեամբ և նրա ծրարագրով բացված: Ամեն մի ընտանիք թող ինքը հոգ տանի իր գաւառի կրօնական դաստաւորութեան վրա: Դա խղճի գործ է և դուրս պետական վերահսկողութիւնից կամ կօնտրոլից:

Անա այս է, որ կոչվում է «պետութեան աշխարհականացում» (laification de l'Etat):

Այդ հակայական ծրարքի մի մասն է, որ Ֆրանսիայի կառավարութիւնն ուղում է իրականացնել: Մի մասը—այդ, բայց խոշոր մասը: Նկատենք, որ հին և միջին դարերում առհասարակ յաղթողը հոգևորականութիւնն էր, իսկ նոր և նորագոյն ժամանակներում գերակշռութիւնն անցել է արդէն աշխարհական իշխանութեանը:

II

Աշխարհական և կրօնական սկզբունքների միջման ամենափայլուն օրինակը տալիս է կաթոլիկ եկեղեցին արեւմտեան Եւրոպայում:

Մի ժամանակ նա լիակատար տէր էր Եւրոպայում: Հռոմի հսկայական կայսրութեան լուծվելուց յետոյ, նրա հպատակների կարգապահութեան ու հպատակութեան վարժված ուղիղ ենթարկվեց կաթոլիկ կղերին: Թէ և ընկաւ ծովածաւալ կայսրութիւնը, բայց նրա տեղը ստեղծվեց մի նոր ու աւելի հսկայական ամբողջութիւն—կաթոլիկ եկեղեցին:

Օստ-Գոթեր, Վեստ-Գոթեր, Լոնգօբարդներ, Ֆրանկներ, սաքսոններ, վանդալներ և բազմաթիւ ուրիշ բարբարոս գերման ցեղեր կազմեցին մանր ու խոշոր նոր պետութիւններ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Ի. Ն. ԲԵՅՏԵՐ

Ինչպէս արդէն հաղորդել ենք, շաբաթ օրը, օգոստոսի 27-ին, սրտի կաթնուածից վախճանվեի Թիֆլիսի կոմէնդանտ գեներալ-լէյտէնանտ Բէյտերը:

Հանգուցեալը ծնվել է 1837 թիւն: Սկզբնական կրթութիւնն ստանալով մի մասնաւոր դպրոցում, նա 15 տարեկան հասակում մտաւ զինւորական ծառայութեան մէջ 1852 թիւն: Այդ ասպարէզում անխնայ ծառայելով, նա բարձրացաւ զինւորական սանդուղքի բոլոր ստորին ու միջին աստիճաններով և վերջապէս 1902 թիւն արժանացաւ գեներալ-լէյտէնանտի բարձր աստիճանին: Մօտ 7 տարի հանգուցեալը վարել է բաւալիօնի հրամանատարի պաշտօն, իսկ 1878 թիւց մինչև իր մահվան օրը նա Թիֆլիսի կոմէնդանտն էր:

Ի. Ն. Բէյտերը մի քանի անգամ մասնակցել է Կովկասի լեռնականների դէմ մղված արշաւանքներին և վերջին ուս-թիւրքական պատերազմին: Այս վերջին պատերազմում հանգուցեալը բաշխութեամբ կուսում, մի թիւթ վէրք է ստացել:

Նա ունէր բազմաթիւ շքանշաններ թէ ուսական, թէ թիւրքական ու պարսկական:

Նա համարեա մարդը կենքն անցկացրեց Կովկասում և մասնաւորապէս Թիֆլիսում: Այստեղ նրան ամենքը ճանաչում էին: Նա յայտնի էր ոչ միայն զինւորական օֆիցեր, կոմէնդանտ և այլն, այլ և իբրեւ հասարակական գործիչ: Նա անգամ էր շատ բարեգործական ընկերութիւնների և նախագահ կենդանիների հովանաւորող ընկերութեան, որը հանգուցեալի խելացի վարչութեան տակ ծաղկեց ու զարգացաւ:

Իբր ընկեր ու մարդ, հանգուցեալը մարմնացեալ բարութիւն էր: Նրան դիմող բազմաթիւ

Հոռմի դիակի վրա:

Այդ բոլոր նորակազմ իշխանութիւնները կաթոլիկ էին: Բոլորը Հռոմի պապի հօտն էին: Շատ երկարատև ու փառաւոր էր Հռոմի տօրապետութիւնը: Դարերի ընթացքում մարդիկ վարժվել էին հպատակվելու Հռոմին: Յեղերն անկախացան, բայց կրկին Հռոմից էին սպասում հրամանների: միայն այժմ հրամանը կրօնական էր:

Պապի հյուս-հարավային բարբարոսները զարգանում են աստիճանաբար: Նրանց աշխարհական պետերն սկսում են կամաց-կամաց դուրս գալ պապերի բացարձակ բռնապետութիւնից: Նրանց թէօկրատիական բռնակալ ձգտումները չափազանց սկսում են ծանրանալ աշխարհական անասն իշխանների վրա:

Սկսվում է դարեւոր կռիւր հոգեւորի և մարմնավորի մէջ:

Բանի մարդկային պատմութեան անիւր առաջ էր շարժվում, այնքան աւելի աշխարհականները յաղթող էին հանդիսանում:

Պապերը գզալով իրանց ոյժի անկումը, սկսեցին առանձին-առանձին համալսարաններ (հոնօր) կամ դաշնագրեր կնքել արդէն հզօրացող ու կենսորոշող ազգային խոշոր պետութիւնների հետ:

Պապերի հին ամենազօրութիւնն ընկել էր, այժմ նրանք ուղում էին մասնակի դաշնագրերով յետ խել իրանց նախկին իրաւունքների գոնէ մի մասը, պահել իրանց ձեռքին անցեալի բեկորները:

Անա այդ մասնաւոր դաշնագրութիւնները կամ համաձայնութիւնները, որ կապում էին պապերը միջին դարերի և նոր ժամանակների աշխարհական պետերի հետ, կոչվում էին կօնկորացիոն,

Եւրոպական պատմութեան մէջ առաջին խոշոր կօնկորացիոն կնքված է 1122 թիւն Կալէքտոս II պապի և Հենրիկոս V կայսրի միջև: Դրանով նրանք շատ թերի կերպով վճռեցին մի խիստ վիճելի խնդիր—իսկիւսիսուալի հարցը: Պապերը նշանակում էին եպիսկոպոսներ ու վարդապետներ իրանց թիւերի հա-

աղբասներին, գործ ուղղորդներին, միջնորդութիւն հայցողներին նա երբէք դատարկածեւն յետ չէր դարձնում: Եւ անպատճառ այժմ նրանից բարեբարված շատ ու շատ անձեր ամենահասակեղծ զգացմունքում ողբում են նրա մահը:

Աւելորդ չէր լինի յիշել նաև, որ հանգուցեալի մայրը Բէյտերէզեան հայ իշխանական յայտնի առնից էր:

## ՆԱՍՏԱԿ ԱՍՈՒՄԱԿՆԻՑ

Օգոստոսի 24-ին

Ներքին գործերի մինիստրի օգնական սեփական Դուրնօֆ օգոստոսի 21-ին հեռագրով տեղեկացրել է երկրիս կառավարչին, թէ բժ. Արեւելք, իրան յանձնված յանձնարարութիւնները վերջացնելով, վերադարձել է Պետերբուրգ: Այժմ Թագաւոր Կայսրը բարեհաճել է ուղարկել մեր երկիրը կոմս Շուվալովին, պատուիրելով նրան հարկաւոր միջոցներ ձեռք առնելու խօրհայի դէմ, որպէս զի նա չը տարածվի կայսրութեան միւս նահանգներում:

Համաձայն մեր բաղադրի կառավարչի զեկուցման, ներքին գործերի մինիստրութիւնը հրահանգաւորել է հետևեալը:

1) Միջին-Ասիայի երկաթուղու իւրաքանչիւր մարդատար գնացքում պիտի գտնվի բժիշկ՝ որը վերահսու պիտի լինի ճանապարհորդութեան ժամանակ հիւանդութեան դէպքերում:

2) Թողնել գնացքներից դուրս գալու աղաւտութիւն Մերվ և Կահախկայ կայսրաններում միայն այն ճանապարհորդներին, որոնք եկած են իշխելու յատուկ այդ կայսրաններում:

3) Կրասնովոդսկից և Չիլիլիցիայից հեռացող այն շոգեւաններին, որոնք բժիշկ չունեն արգելել տեղափոխելու համար բարդիկ վերցնելու:

մար, բայց կայսրները (գերմանական) նըրանց չէին ընդունում, հող չէին տալիս, նոյն իսկ գէնքի ուժով հալածում էին նըրանց. իրանք էին ուղում նշանակել իրանց պետութեան մէջ բարձրաստիճան հոգևորականներին: Իսկ երբ իրանք էին նշանակում, պապը չէր ճանաչում նրանց, բանադրում, դուրս էր քշում եկեղեցուց...

Անա այդ հարցի առիթով կնքվեց առաջին կօնկորացիոն: Պապը պէտք է նշանակէր եպիսկոպոսներին, իսկ կայսրը պէտք է նրանց տար, հազցնէր (investire) իշխանութիւն: 25-րդ միջին դարերում եպիսկոպոսները հողեր ունէին, նրանք էլ աշխարհական իշխաններ էին միաժամանակ:

XV դարի սկզբներում զարհուրելի խառնաշփոթ վիճակի մէջ էին կաթոլիկ եկեղեցու գործերը: Յովհանն Հուսի, Ուիլիլմի, Սալօնաբօլայի բողոքող շարժումները պղտորել էին մտքերը: Կօնստանդուլում կազմված իբր քեպիսկոպական ժողովը յօնքը շինելու փոխաբէն՝ աչքն էլ հանեց: Ֆրանսիան ունէր իր պապը, Սպանիան իբր, Կօնստանդուլի ժողովը կամ կօնսիլն էլ իբր նշանակել: 3 հակաթոռ պապ միաժամանակ: Անա այդ պապերից մէկը, Մարտին V 1418 թիւն առանձին-առանձին կօնկորացիոն-կապից Ֆրանսիայի, Դերմանիայի և Անգլիայի պետերի հետ, զիջումներ արեց նրանց և ինքը ճանաչվեց նրանցից իբր իսկական, լիցքված պապ, իսկ միւսներն իրաւաւորել եղան:

1449 թիւն Ֆրիդրիխ III կայսրը և Եւգենիոս IV պապը կնքեցին Վիեննայի կօնկորացիոն, որով պապին իրաւուր էր տրվում կայսրի երկրից կրօնական տուրքեր (նոյն իսկ կանօնաւոր հարկեր): Տաւաբելու, որը գումարներ պահանջելու հաւատացեալներից, ամբողջ կայսրութեան մէջ հոգեւոր հովիւներ նշանակելու և այլն:

Այս մի քանի օրինակներ բաւական համարելով մնացած Եւրոպայի վերաբերութեամբ, այժմ դիմենք Ֆրանսիային:

(Կը շարունակվի)



կան ազգայնական զգացման արտայայտու-  
թիւն և մի և նոյն ժամանակ ուսուցիչ կառա-  
վարութեան անխախտելի վճիռն է: (T. A.)

Լուսեր միջազգայնական հաղորդում է, որ Ֆրան-  
սիայի, Անգլիայի և Միացեալ-Նահանգների  
միջև բանակցութիւններ են սկսուել, թէ ինչ  
միջոցներ գտնել կանգնեցնելու արեւմտեան  
թիւնը Հեռաւոր-Արեւելքում: Ենթադրում են,  
որ հետեւեալ պայմանները հիման վրա կա-  
րող է հաշուութիւն կնքել: Մանջու-  
րիան վերադարձնում է Չինաստանին եւ-  
րոպական տուգանք չէ պահանջում: (Hob.)

Ռուսաստանը նոր հաշուութիւն է քննում: Նիւ-Եոր-  
կից հաղորդում են, որ Ռուսաստանը շատ  
նաւեր է պատուիրել Ամերիկայում: Անգլիա-  
յում Ռուսաստանը ոչ մի պատուէր չէ արել,  
ի նկատի ունենալով անգլիացիներին թշնամա-  
կան վերաբերմունքը դէպի Ռուսաստանը: Ա-  
մերիկայում արած պատուէրները այնքան մեծ  
են, որ ամերիկական նաւաշինարանները կարող  
են բարձրացնել ամերիկական անկեղծ նաւա-  
շինութիւնը: (Русс)

ՍՐՏԱՔԻՆ ԼՈՒՆԻՐ

«Temps» լրագիրը հաղորդում է, որ թիւր-  
քաց կառավարութեան խոստացած օգնութիւ-  
նը Սասունի ժողովրդին իր նպատակին չը  
հասաւ: Ինչպէս յայտնի է, սուրբանը նուրբեց  
5000 լիրա հայ այրված գիւղերը վերանորո-  
գելու: Սակայն այդ գումարը տեղական իշ-  
խանութիւնները գործ դրին զորանոցներ  
կառուցանելու Սասունում: Հայ ժողովրդի դը-  
րութիւնը յուսահատական է: մինչև այսօր ոչ  
մի կողմից որ և է օգնութիւն չէ հասցրված,  
մինչդեռ քիւրդերը և կանոնաւոր զօրքերը շա-  
րունակում են աւերել և քանդել նրանց տնե-  
րը: (Hob. Время)

«Արեւմտայի» «Informaation» լրագիրը հաղոր-  
դում է, որ թիւրքաց սուլթանի անուով իր  
հրահանգով Սասունի պատմական թիւրքաց  
բաղա-  
բակները շրջաններում չափազանց մտահոգու-  
թիւն է պատճառում զանազանագութեան  
հարցը: Պարսկական կուսակցութիւնը, որի  
պարագլուխն է Իզմէտ-փաշան, աշխատում է  
զանք ապահովել սուլթանի կողմից և սիրե-  
ցեալ որդի Րիզաթի համար, որի կառավարու-  
թիւնը հաճելի կը լինէր Բէֆօրմիսի բոլոր  
կուսակցիներին: Սակայն պահպանողական  
կուսակցութիւնը ընդդիմանում է այդ ծրա-  
գրին: (Hob. Время)

ՄՇԱԿԻ ՀԵՌՄԱՆՈՒՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԻՍԿԱՅԻՆՈՒԹԻՒՆԵՐԸ

28 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեւալ-աղբւտանս Կուր-  
պատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին  
Կայսերական Մեծնութեան Անունով օգոստոսի  
27-ին, «Օգոստոսի 26» և 27-ին բանակը չու-  
նեցաւ պատերազմական ընդհարումներ: Հա-  
կառակորդը չէ ցոյց տալիս ներգործական  
գործունէութիւն: Տեղատարափ անձինքը  
շարունակվում են, նրանք թոյլ չեն տալիս, որ  
ճանապարհները չորանան և պակասութիւննե-  
րը չենվեն: Այդ մասին ամենահպատակօրէն  
զեկուցանում են Ձերդ Կայսերական Մեծնու-  
թեան: (Hob. Время)

28 օգոստոսի

ԼՃԱՍՍԱ: Դաշնագիրը կնքելուց յետոյ գնդա-  
պետ Իօնգէնսկայը մի ճառ խօսեց, որի մէջ  
այն միտքը յայտնեց, որ մեծ-բրիտանական  
կառավարութիւնը չի խառնվի կրօնական հար-  
ցերի և Տիբեթի ներքին կարգերի մէջ, այլ  
ցանկանում է միայն կանոնաւորել ա-  
ռւտարական յարաբերութիւնները և Մեծ-Բրի-  
տանի ու նրա հպատակների հետ արժա-  
նավայել վերաբերմունք: Նա յայտ ունի, որ  
երկարատե խաղաղութիւն կը լինի, բայց  
դաշնագրի ամեն մի խախտումը խստօրէն կը  
պատժվի: Յետոյ Իօնգէնսկայը հաղորդեց  
պատերազմական գերիների ազատման մասին:

ԼՈՒՆԻՐ: Որքան այժմ յայտնի է, անգլիա-  
ցիները զրկել են Տիբեթին հետեւող պայման-  
ները, արշաւանքի ծախքերը վճարել, բաւարա-  
րութիւն տալ մեծ-բրիտանական ներկայա-  
ցուցիչներին հասցրած վերաւորանքի և զինված  
զինադրութիւն ցոյց տալու համար, Տիբեթի և  
Հնդկաստանի միջև առևտուրը դիւրութիւններ  
և տիբեթեան հողի վրա անգլիական սահմա-  
նային սիւներ կանգնեցնել:

ԼՈՒՆԻՐ: Լաւասայից հեռագրում են, որ  
գալալ-լաման, ինչպէս երևում է, չի վերա-  
դառնալ: Աշխարհական իշխանութիւնը կը  
թանձնի խնամակալի, իսկ Շիբազգէի Տաշէն-  
լաման, հաւանօրէն, հոգեւոր գլուխ կը ձա-  
նալվի: Անգլիական արշաւախումբը կը սկսէ

վերադարձը հոկտեմբերի 3-ի մօտերը: Խաղա-  
ղութեան կնքիւր անգլիական քաղաքական  
շրջաններում շատ մեծ բաւականութիւն է ա-  
ռաջացնում: Սպասում են, որ այժմ Անգլիան  
խակական հովանաւորութիւն կը հաստատէ Տի-  
բեթի վրա:

ԿՐՕՆԵՏԱՆԴ: Ցամաքային բերդապահ զօրա-  
մասերը Հեռաւոր-Արեւելք մեկնող կօնոր-ծո-  
վապետ Բօթիստովինսկուէ կազմակերպին մատու-  
ցանում են մի ուղեւժ վաղեմի Ստոտա-  
ծամօր պատկերով:

ԼՈՒՆԻՐ, օգոստոսի 28: «Քայմա»-ի թղթա-  
կիցը եւրոպական ծախաղովեան բանակում  
ենթադրում է, որ Կուրօպակիւնը յետ կը  
բաշխի դէպի իր օժանդակ զօրքերը, որ ժա-  
մուտի են Եւրօպայից, և հաւանօրէն իւրեր-  
նի ճանապարհին դիւր կը բռնէ: Եւրօպական  
բանակը, այն դէպքում, երբ նա կը համար-  
Մուկղէնին, ստիպված կը լինի մի առժամա-  
նակ հանգստանալ վերջին 14 օրերի լարված  
դրութիւնից:

ՅԶԻՆԴՈՒՆ, օգոստոսի 28 (Բէյութ): Տօկիօ  
գնացող մի եւրօպացի օֆիցէր հաղորդեց, որ  
եւրօպացիների կորուստները Պօրտ-Արտուրի  
մօտ վերջին օրերս շատ մեծ են—15,000 հո-  
գուց աւելի: Իսկ Լեւոսեանի մօտ սպանված և  
վիրաւորվածների թիւը 20,000-ից աւելի է:

ՉԼԵՆԳՆԻՆ, օգոստոսի 28 (Բէյութ): Ժամանեց  
երեկ Դաշնից դուրս եկած մի եւրօպացի:  
Նա ասում է, որ լուրերի համեմատ գլխաւոր  
շուրջը, որ մատուցութիւն կար այսօր անել,  
յետեւագրված է մինչև օգոստոսի 31-ը, և կարող  
է պատահի, որ նորից յետագգվի:

ՇԼԵՆԳՆԻՆ, օգոստոսի 28 (Բէյութ): «Աս-  
կօլը» դուրս եկաւ նաւաշինարանից և կանգ-  
նեց «Մանջուրի» և «Կրօզով» մօտ: Էկիպա-  
ժը կը մնայ նաւի վրա՝ մաքսատան թղթա-  
թափի նաւի հակողութեան տակ:

ԼՈՒՆԻՐ, օգոստոսի 28 (Բեյութի վրայով):  
Ձիֆուից եկած հեռագիրները հաղորդում են,  
որ օգոստոսի լոյս 18-ի գիշերը ցողացուցիչ-  
ներով ի յայտ բերվեց եւրօպական ակա-  
նակիւնների մի փոքրիկ նաւատորմ, որ ուղեկ-  
ցում էր ականներ գնդակահարող նաւին:  
Այն մարտիկները կրակով այդ նաւը ջրա-  
տուց արվեց: Մինչև օգոստոսի 25-ը եւրօպա-  
ցիները կորցրել են 29,600 մարդ:

ԼՈՒՆԻՐ, 28 օգոստոսի: (Բէյութ): Ռուսնե-  
րի տակտիկայի վերաբերմամբ «Տայմի» թղթ-  
թափիցն ասում է. «Ռուսների ամենագլխաւոր  
սխալը նրա մէջն է, որ նրանք մարդկանցով  
շատ են լցնում իրանց պաշտպանողական դիւ-  
րքերը, այն ինչ եւրօպական տակտիկայի միակ-  
սկզբունքը, ինչպէս այդ ցոյց տուցին  
Օկուի հրամանատարութեան տակ գտնվող  
գիւղիկայի գործողութիւնները, կտրական ճա-  
կատային յարձակումներն են: Եւ համոզված  
են, որ Օկուի հրամանատարութեան տակ է  
գտնվում աշխարհի լաւագոյն հետեւի զօրքը:  
Չեմ կարծում, որ որ և է մի ուրիշ զօրք կա-  
րող լինէր յաջողաբար հինգ օրվայ ընթաց-  
քում ութ անալող ընդհանուր հետեւիկային  
յարձակումներ կատարել ամբողջութեան դէմ  
և այնու ամենայնիւ չը կորցնել տուրմուն-  
թիւնը»:

ԲԵՆԻՆ: Ռուսական զենազան ժաղօվալու  
կետեւի դէմ յանցաւոր փորձ անող Իլինկու-  
զործի ընդութիւնը աւարտվեց և ակտերը շու-  
տով կը ներկայացվեն շվեյցարական դատա-  
սանական իշխանութիւններին:

ՅԻԼԻՊՊՈՂՈՂ: Հնդկականաւոր աղբւրից Կ.  
Պօլում ստացված են տեղեկութիւններ, որ  
լուրժ անկախութիւններ տեղի ունեցան Վա-  
նի, Բիթիլի և Էրզրումի վրայէններում, որ  
առաջացրին հայ յեղափոխական հրոսակա-  
յութիւնը: Հիւսիսայինները խորհուրդ են տալիս  
եռանդուն խաղաղացում կատարել, սակայն  
բռնութիւններ չառաջացնելով:—Բօլաքական  
զինուորական միւնիստրը հրաւիրեց Սօֆիայում  
գտնվող բոլոր զինուորական գործակալներին  
ներկայ լինել մեծ զօրանադէմներին, որոնք  
տեղի կունենան զեկտեմբերի 10-ին Պօպովեան  
շրջանում Բաղդադի մօտ հէնց իրանի իշխանի  
գլխաւոր զեկավարութեամբ:

29 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն ուկաղ. «Անհրա-  
ժեշտ համաձայնով պատերազմական դրութեան  
մէջ ընել Օրէնայի շրջանի մի քանի զօրա-  
մասերը, որոնք նախորդած են մեր զինա-  
ւորված ոյժերը զօրեղացնելու համար Հեռա-  
ւոր Արեւելքում, աւելացնելով դրանց զօրա-  
մասեր և ուրիշ զինուորական շրջաններից, նոյն-  
պէս կազմակերպել նորից մի քանի յատուկ  
զօրամասեր և ուժեղացնել գործող զօրամա-  
կի զոյգութիւն ունեցող մի քանի մասերը,  
Մենք հրամայեցինք, ներկայ թիւն զինուորա-

կան միւնիստրին տուած Մեր ուկաղով, այդ  
առարկայի վերաբերմամբ այժմ և եթ Մեր  
ցուցմունքների համեմատ բոլոր պատշաճաւոր  
կարգադրութիւններն անել: 1) Իսկական ծա-  
ռայութեան կանչել, համաձայն գործող ցու-  
ցակի այդ դէպքի համար առանձին մասնա-  
ւոր փոփոխութեան, զօրքի պահեստի զինուոր-  
ների հարկաւոր թիւը հետեւեալ գաւառներից՝  
Օրէնայի զինուորական շրջանի, Ուլսոնի նա-  
հանգի—Ուլսոնի, Ալեքսանդրիսկի, Անանիէ-  
վի, Երիւսաւուրադի, Օրէնայի և Տիբասայի:  
Բնաւորայի նահանգի—Բիլինգի, Ակկէ-  
մանի, Բէնգէրի, Բէլէգի, Բադայի, Օրգէ-  
վի և Սօրօկեան. Եկատերինսկայի նահանգի—  
Եկատերինսկայ, Ալեքսանդրովեան, Բախ-  
մուտի, Վերինէնէպովեան, Մարիուպօլի,  
Նօփօսովեան, Պալիօքրադեան և Սլավա-  
նօսերեան, Տաւրիկեան նահանգի—Բէրդիան-  
սկի: 2) Վերոյիշեալ գաւառներից մի քանիս-  
ներում, բացի պահեստի զինուորների կանչե-  
լուց, տալ պատերազմի կարիքներին համար  
ձիւր, համաձայն այն կարգի, որ մտցրված է  
գործող զօրամարտի ցուցակագրութեան առա-  
ջին կէտում յիշված մասնաւոր փոփոխու-  
թեան մէջ: 3) Իսկական ծառայութեան կան-  
չել պահեստի զօրքի կայսրութեան սահման-  
ներում ապրող այն բոլոր օֆիցէրներին, ո-  
րոնք, գոյութիւն ունեցող բաժանումներին հա-  
մաձայն, նշանակվելու են այժմ պատերազմա-  
կան դրութեան մէջ զինվող, նոր կազմակերպ-  
վող և ուժեղացնվող զօրամասերը լրացնելու  
համար, նոյնպէս և, հարկաւորութեան դէպ-  
քում, պահեստի և հասարակ զինուորներին,  
որոնք այս ցուցակով նշանակված են փոխա-  
րինելու օֆիցէրներին և այլ պաշտօնեաներին  
նոյն զօրամասերում: Կառավարչական Սենա-  
տը այդ կատարելու համար թող պատշաճա-  
ւոր կարգադրութիւնն անէ:» Իսկականի վրա  
Նորին Մեծնութեան Սեփական ձեռքով ստո-  
րագրված է. «ՆիկՕԼԱՅ»: Պետերօֆ, 24 օ-  
գոստոսի 1904 թւի»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Օրէնքների ժողովածուի»  
մէջ հրատարակված է, որ նշանակվում է  
1904—5 թվականների շրջանի համար այն  
շաբաթի քանակութիւնը, որ հարկական է ար-  
տաղբի գործարաններից ներքին շուկայի հա-  
մար, շաբաթի անձեռնմխելի պահեստը և վերջ-  
նական գները 1904 թվ. սեպտեմբերի 1-ից  
մինչև 1905 թվ. յունվարի 1-ը 4 ր. 20 կ.  
պուլը, իսկ յունվարի 1-ից մինչև սեպտեմ-  
բերի 1-ը 1905 թվ. 4 ր. 35 կ. պուլը:

ԼԵՍՕՆԵՆ, 27 օգոստոսի: (Բէյութ): Եւրօ-  
պական զօրքերի մէջ տեղում է կարգապահու-  
թեան կատարեալ քաղաքականութիւն: Երեկ երե-  
կայեան, երբ զինուորները կողոպտում էին քա-  
ղաքը, ընդհանուր խառնակութեան մէջ վերա-  
ւորվեց շտաբանական մի միսիօնէր:

ԼՈՒՆԻՐ: (Բէյութ): Եւրօպական միսիսիան  
հրատարակեց հետեւեալ հեռագիրը. «Օյամա  
զեկուցանում է, որ օգոստոսի 22-ի և 23-ի  
ճակատամարտերից յետոյ եւրօպական աշա-  
կողման զօրաբաժինը գրաւեց չինական ած-  
խահանքերը և Իմէնգէլ լեւոր: Ռուսաց զօ-  
րաբաժին գլխաւոր ոյժերը յետ են նահան-  
ջում հիւսիսային ուղղութեամբ դէպի Ուն-  
գիտը: Տեղացիներն ասում են, որ ուսուները  
երկաթուղով գաւառ տարան 10,000 վիրաւոր-  
ներին, իսկ երեք հազար սպանվածներին մնա-  
թաղեցին: Դուրս գալուց առաջ ուսուները  
այրիցին պահեստները երկաթուղու կայարա-  
նի մօտ»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեւալ-աղբւտանս Կուր-  
պատկինի հեռագիրը Նորին Կայսերական Մե-  
ծնութեան անունով 1904 թվ. օգոստոսի 28-ից.  
«Օգոստոսի 28-ին, բացի աննշան ընդհարում-  
ներից մեր և եւրօպական իւրաքանչիւ խմբերի  
միջև, առանց կորուստների մեր կողմից, պա-  
տերազմական ոչ մի գործողութիւն տեղի չէ  
ունեցել: Վերոյիշեալի մասին ամենահպատա-  
կօրէն զեկուցանում ենք Ձեր Կայսերական Մե-  
ծնութեանը»:

30 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օգոստոսի 29-ին արտա-  
սահման ուղևորվեց Մեծ Իշխան Միխայիլ Նի-  
կոլայիվիչ:

ՉԻՖՈՒ: 28 օգոստոսի: Վերջին կուրսերի  
ժամանակ Պօրտ-Արտուրի մօտ եւրօպացիների  
զրաւեցին չորս մարտիկ, բայց ստիպված  
էին նորից մարքել նրանց: Ռուսները նորից  
թղթաւորներ զրին այդ մարտիկների վրա և  
եռանդով պատրաստվում էին զիմարելու յա-  
ջողը շուրջմիջ:

ՏՕԿԻՐՈ, 29 օգոստոսի: (Բէյութ): Երեք զօ-  
րաբաժին գլխաւոր բժշկի զեկուցումներ  
փաստերի հիման վրա, եւրօպացիների կո-  
րուստները Լեւոսեանի մօտ տեղի ունեցած

ճակատամարտում համարվում են օգոստոսի  
13-ից 17,534 մարդ սպանվածներ և վերա-  
ւորվածներ. այդ թւից Կուրօլիի զօրաբաժինը  
կորցրեց 4,866, Նօրգուն—4992 և Օկուն—  
7,681 մարդ: Օֆիցէրներ սպանված են 136 և  
վիրաւորված են 464 մարդ:

Կ. ՊՈԼԻՍ, 29 օգոստոսի: Զմիւռնայում  
ժանտախտով հիւանդանալու երկու կանկա-  
ծելի դէպք է եղել. ի նկատի ունենալով այդ,  
այդտեղից եկող միջերընը կենթարկվին  
բժշկական քննութեան և զէկլինիկէլոյի:  
ՀԻՐՈՍ, 29 օգոստոսի: Զէմուրպում գտնվող  
իտալական Մարիօ Պօլօ պատերազմական նա-  
ւի վրա ուսմբի պայթիւն տեղի ունեցաւ.  
այդ ժամանակ պայթած գաղբից թունաւոր-  
վեցին երեք մարդ, որոնք մեռան, 17 ուրիշ-  
ները, որոնց թունաւորվելը աւելի թեթեւ ձե  
ունէր, առողջանում են:

ԿԱՐԿԱՐԱԼԻ, 28 օգոստոսի: Սասունի քա-  
մու ժամանակ այրվեց քաղաքի երրորդ մասից  
աւելին: Վնասները նշանաւոր են:

ՄՕՍԿՎԱ: Դասատուների շրջաններում քն-  
նվում է ծեր ժանկավարների համար հանրա-  
կացարան հիմնելու հարցը:

ՎԻԵՆԱ, 29 օգոստոսի: Յունական Գէօրգի  
պրինցը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ:

30 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեւալ-աղբւտանս Սախա-  
րովի հեռագիրը գլխաւոր շաբաթի 1904 թ.  
օգոստոսի 29-ից. «Պարզված է, որ դէպի Եան-  
տայի հանքերը տանող երկաթուղային գիծից  
դէպի հիւսիս եւրօպական նշանաւոր ոյժեր  
չը կան: Աւելի հարաւ, Լեւոսեանի ուղղութեամբ  
գտնվում են նրանց ընդարձակ և բազմաթիւ  
քանակները»:

ԽԱՐԻՆ, 29 օգոստոսի: (Սեփական թղթ.):  
Ամեն օր գալիս են հարաւից գնացքներ վի-  
րաւորներով: Անընդհատ և կանոնաւորապէս  
փոխադրվում են նրանք աւելի հեռաւոր տե-  
ղեր: Վիրաւորվածների, նոյն-իսկ ծանր վի-  
րաւորվածների հոգեկան տրամադրութիւնն աշ-  
խոյժ է: Շատերը ձգտում են, հէնց որ հնա-  
րաւոր լինի, նորից շաբթի մէջ մտնել Պատե-  
րազմական բեմից նոր տեղեկութիւններ չեն  
ստացվել: Ըստ երևոյթի, երկու բանակներն  
էլ կը զբաղվեն իրանց ոյժերը կենտրոնացնե-  
լով համապատասխան պատերազմական դրու-  
թեան փոփոխված պայմաններին: Պօրտ-Ար-  
տուրից ստացված վերջին տեղեկութիւնները  
հանգստացուցիչ են:

ՏՕԿԻՐՈ, օգոստոսի 29-ին («Բէյութ»): Օյա-  
մա զեկուցանում է, թէ Կուրօլիի օգոստոսի  
22-ին և 23-ին դէպի հիւսիս-արեւմուտ շաբ-  
վելով՝ ուսուներին ստիպեց նահանջել դէպի  
Մուկղէն: Կուրօլիի հաղորդում է, թէ օգոստո-  
սի 23-ի կուրից յետոյ ուսուներ Մուկղէն տե-  
ղափոխեցին 10,000-ից աւելի վիրաւորներ և  
հաւաքեցին սպանվածների մեծ մասը, այնու  
ամենայնիւ թողին Լեւոսեանի մօտ 3000 զիւկ-  
նահանջելու ժամանակ ուսուները յաջողվեցին  
տանել թղթաւորները և ուսուների պաշարը:  
Խրամաններով գտնված են մի քանի սայլեր:  
Եւրօպական կորուստները դեռ պարզված չեն,  
բայց հազարն են: Օգոստոսի 22-ին 10 ժամին  
Կուրօլիի կենտրոնական զօրամասը յարձակ-  
վեց ուսաց ուժիկ զօրախմբի վրա՝ Խախա-  
կուի մօտ, եւնտայից դէպի արեւելք: Սաս-  
ունի կուրից յետոյ գիշերվայ ընթացքում եւ-  
րօպացիներն ստիպեցին ուսուներին նահանջել  
դէպի հիւսիս: Եւրօպական ճախ զօրախմբը  
առաջ շաբթվելով արեւմտեան ուղղութեամբ  
գրաւեց այն դիրքը, որ տարածվում է դէպի  
հիւսիս-արեւմուտ, Շախիսից մինչև Շան-  
սեպցի: Ռուսական առաջապահ գունդը գրա-  
ւում է խրամաններով ամրացրած գիծը բարձ-  
րութիւնների երկարութեամբ Տանտագուօից  
դէպի արեւելք: Ռուսաց մի զօրաբաժին, որի  
թիւը անյայտ է, շարունակում է շարժվել դէ-  
պի Բասեպցի:

ԿԱՐԿԱՐԱՐԱՐ: Օգոստոսի 22-ին արտիլերիան  
ամրակոծում էր յետ նահանջող ուսուներին,  
այն

ՏԵՆՆԵՐԻՆ, 29 օգոստոսի: (Բէյտէր): Լուս-  
բեր են պատում, որ Մանջուրիայում մեծ  
պատի այն կողմը առաջանում են չինական  
զորքեր և որ չինական ուրիշ զինքեր արդէն  
գրաւած ունեն այժմ Լիաօսիէի երկու ամիւրն  
են. հաստատում են, որ այդ զորքերը նա-  
նակված են գրաւելու համար այն հողը, որը  
հաղթանակներին է բաժին ընկել: Գերմանա-  
կան օֆիցէրները միջոցներ են ձեռք առնում  
ստորագրելու այդ լուրերը: Ինչպէս երևում է,  
չինական զորքերը ցամաքային ճանապարհով  
են գնում լիւնները ետեւ, և ոչ թէ երկաթու-  
գով: Նրանց թիւը որոշել չէ կարելի:  
ԼՈՆԴՈՆ, 30 օգոստոսի: (Բէյտէր): Եւրո-  
պական ծախ բանակում գտնվող «Դէյլի Տէլե-  
գրաֆ»-ի թղթակիցը հաղորդում է օգոստոսի  
26-ից, որ եւրոպացիները գերաւորութիւն  
ունեն Մուկդէնը գրաւելու 3 շաբաթ յետոյ և  
արդէն ճանապարհ են ընկել, շարժվելով լեռ-  
ների վրայով ժամանակաւոր ներդուրի երկա-  
թուղու օգնութեամբ: Օյիաման հրամայել է  
Կուրօսկիին միանալ այն բանակին, որ գտնու-  
մում է այժմ Լիաօսիէից 5 մղոն հիւսիս-արեւ-  
ելքում: Շնորհիւ այն բանի, որ Կուրօսկիին  
չափովից զուրա զայ լիւնային վայրերից և  
գրաւել երկաթուղին, Կուրօսկիին հնար  
ունեցաւ յետ նահանջելու: 24 ժամ շարունակ  
երկու կողմի դրութիւնն էլ շատ լուրջ էր:  
Միայն Օկուր բանակի հիւսիսի յարձակում-  
ներն ապաստեցին եւրոպացիներին: Յարձա-  
կումները կատարվում էին իրար ետեւից մէկ  
մէկի վրա, որպէս զի Կուրօսկիի բոլոր բանակը  
փրկվի: Ներկայ կազմակերպութեամբ ուսումնարը  
չեն կարող դիմադրել եւրոպացիներին ոչ լեռ-  
ներում, ոչ դաշտավայրերում: Արդիւնքն այն  
եղաւ, որ Օկուր, Նոգուրի և Կուրօսկի բանակ-  
ները միացան՝ նպաստելու ունենալով անցնել  
Մուկդէնի միւս կողմը արևմուտքից: Այս  
տարվայ մանջուրական պատերազմը կը վեր-  
ջանայ Մուկդէնի առումով:  
ԼՈՆԴՈՆ: Օգոստոսի 30-ին (Բէյտ. գործ.):  
«Դէյլի-Մէյ» լրագրին Տանթրիքի հաղորդում  
են, որ Սպարտիկ հրուանդանի բարձրութեան  
վրայից երէկ նկատել են ուսումնական մի կրէյ-  
սէր: «Դէյլի Տէլեգրաֆ» խիստ դատապար-  
տում է եւրոպական իշխանութիւնների գոր-  
ծողութեան ձևը օտարերկրեայ գործակալնե-  
րի և թղթակիցների վերաբերմամբ և ասում  
է, որ եւրոպացիները կատարում են քաղա-  
քական մեծ սխալ: Անգլիայի ներկայացուցիչ-  
ների վերաբերմամբ եւրոպացիները չը պէտք  
է մոռանան, որ միայն բրիտանական միա-  
ջեպի նաւատորմի հզօրութիւնն էր, որ ար-  
գելից կօյլիցիային ոչնչացնել եւրոպական  
գերիշխանութիւնը ծովի վրա: Արևմուտքի  
անկեղծ համակարգները արձագանք չեն  
գտնում եւրոպացիներին կողմից — շնորհիւ  
նրանց աւելորդ դիւրահաւատութեանը: «Դե-  
յլի Տէլեգրաֆ»-ը քննադատում է նոյն-  
պէս եւրոպական ռազմագիտութիւնը և ա-  
սում է, որ Լիաօսիէի ճակատամարտը ամե-  
նէին մահացու հարուած չը հասցրեց ուսու-  
կան հզօրութեանը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ  
Հրատարակիչներ՝ ԹԻՄՈՒՀԻ ՏԵՐԱՆԵԱՆ  
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱԼԱՄԱՆԵԱՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ  
**Գ. Ե. ՀԱԽԱԿԻՐԵԱՆ**  
Մասնագէտ միջազգային և սիֆիլիսի բանական  
հիւանդութիւնների, — ընդունում է հիւանդնե-  
րին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան  
6. ժ.—9 ժ.: Կուկիւ, Միսիսիօսկայիս փ. № 20.  
(ո. Կ. Ե.) 2—30

Ընդունում են ձեռնառն պայմաններով  
**Գ Ի Շ Ե Ր Օ Թ Ի Կ**  
աշակերտներ. Бедютовский пер. домъ № 23.  
(ո. Կ. Ե.) 3—6

**Յովսէփ Մէլիք-Չանկեսանի**  
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍՈՒՆՈՒՄ  
ընդունում են գրեթէ թիկ և երթեկ աշա-  
կերտն եր պատրաստվելու բոլոր միջնակարգ  
գաղութների համար. ընդունվում են նաև իրրև  
գիշեր օթիկ գաղութներում արդէն սովորող-  
ները: Օտար լեզուներից աւանդվում են գեր-  
մաներէն և ֆրանսերէն: Թիֆլիս, Բէհրու-  
թեան փողոց № 10, տ. պոլկ. Ստեփանեանի:  
(Ե. Կ. Ե.) 5—10

**Հարկատու Է** հայերէն և ռուսերէն լե-  
զուներ լաւ իմացող ՀԱՅ  
ՈՒՍՈՒՆՆԱՐԱՆՈՒՄՈՒՄ ՎԵՐԻՆ-ԱՂԱՎԻՍ ԳՆԱՐԸ ՀԱ-  
ՄԱՐ: Պայմանների մասին կարելի է տեղեկա-  
նալ Бедютовская ул. № 45, кв. Аветисова.  
(ո. Կ. Ե.) 2—3

**ՖԻՆԱՆՍԵՐԷՆ**  
Լեզուի մի փորձված ուսուցիչ պատրաստ է  
պարագվելու ցանկացողներին հետ: Ուշը է  
դարձվում մասնաւորաբար պրակտիկայի վրա:  
Դիմել «Մշակի» խմբագրութեան:  
(Կ. Ե. Ե.) 1—10

**ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍՈՒՆՈՒՄ**  
**Գ. Լ. ԿՈՒՉԱՆՈՎԻ**  
Ընդունվում են գրեթէ թիկներ, կլ սագրեթ-  
թիկներ և երթեկներ: Պատրաստում են բոլոր  
միջնակարգ գաղութներ մանկու համար և կրթ-  
նողութիւն են անում բոլոր առարկաներից:  
Ուսումնական սկզբը սեպտեմբերի 1-ից է:  
Սոյալի, Լէրմոնովսկայա փողոց № 26  
(Ե. Կ. Ե.) (նախկին Նազարեան) 1—2

Յայտարարում են ի գիտութիւն թարգմանիչ-  
ների, որ բնա գրից թարգմանված և արդէն  
պատրաստ ունեն.  
ՊՈԼ ԷՐՎԻՅՈՒ «Հանելուկ» դրաման,  
ԱՆՐԻ ԲԵԿԵՆ «Աղաւներ» կոմէդիան,  
ՊՈԼ ԲԵՅՈՒ «Հարս» կոմէդիան,  
ԻՊՈԼԻՏ ԼՈՒԱՋՈՒՆ «Արիւնի Աւետարան»  
դրաման:  
1—3 (Ե. Կ. Ե.) Տիգրան Զաւէն

**ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ ԼՈՒՍԱԳՐԱՍՈՒՆ**  
**„ԱՐԱՔՍ“**  
Գրիգոր ձեպէյեանի  
Ընդունում են պատուէրներ ամեն տեսակ  
լուսանկարչական գործերի. պատուէրները կա-  
տարում են ընտրի ճաշակով: Բաց է ամեն  
օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6  
ժամը, Միքայէլեան պողոտայի № 37, ս. Աս-  
տուածածին եկեղեցու դիմաց:  
Մասնագէտ-լուսագրիչ՝  
Գ. ձեպէյեան  
1—1

**Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն**  
Անդրկովկասեան երկաթուղիների գլխաւոր,  
պետական խորհրդական, Ինժեներ Իպոլիտ  
Կոնստանտինովիչ Բովանովսկիի ներկայումս յայտ-  
նում է ի գիտութիւն ընդհանուր, որ նա  
ոչնչացրել է այն հաւատարմութիւնը, որ  
տրված էր երկաթուղիների վարչութեան հա-  
նուրից անդրկովկասեան երկաթուղիների հա-  
մար հողեր ծախող գործակալ Կոնստանտին  
Պետրովիչ Անդրէեւիչին և հաստատված թիֆ-  
լիսի հոտար Միքայէլեանի մօտ 1902 թ-ի մայիսի  
1-ի ցուցակով № 4295: 2—3

**Դ Պ Ր Ո Յ**  
**ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ**  
Երկու սեռի մանուկների համար: Ընդունելու-  
թիւնը՝ սեպտեմբերի 1-ից, ուսման սկիզբը  
սեպտեմբերի 6-ից: Բնակութեան փող. սեփ.  
տ. 29. 21, 26, 29, 31, ս. 1, 3 4—6

**Պանսիօն եւ Ռաւմաւարան**  
**Վ Ի Լ Լ Ի Ս Մ Ս Ի**  
Ընդունվում են գրեթէ թիկ և երթեկ երթա-  
ներ պետական կրթական հիմնարկութիւն-  
ների համար պատրաստելու. առանձնապէս՝  
— ֆրանսերէն և գերմաներէն լեզուներից:  
Александрополь, рядомъ съ городскимъ са-  
домъ. (Ե. Կ. Ե.) 9—10

**ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԳԻՇԵՐՈԹԻԿՆԵՐ**  
(պանսիօնէր)  
**ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՀԵՅ ԲՆՏԵՆԵՐՈՒՄ.**  
պահանջված ժամանակ արվում է դասընթացի  
կրկնողութիւն գիմնազիայի բոլոր դասարան-  
ների համար: Հասցէ ՖԻՅԵՆՍԻՍԿԻ Ձ. 4.  
(ո. Կ. Ե. Ե.) 4—5

Թարգմանված և արդէն պատրաստ է տպա-  
գրութեան Պատալէնկոփ  
**Ք Ա Ի Ո Ւ Թ Ի Ն**  
Դրաման.  
Ա. Զարեբեան. 2—3

Էժան **գիշերօթիկներ Է** ընդունում  
գնով 8—10 տա-  
րեկան մանուկների. հարցնել այրի Աննա  
Վանցեանին Չուրուրէթ, տուն Դանդուրեանցի  
№ 34. (Ե. Կ. Ե.) 4—5

**ԲԱԼԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**  
Վօգային փողոց, տուն Թիֆլիսի առևտրական բանկի:  
**Ա Թ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Մ Ի**  
1) Երկաթէ բաղանդներ ամեն տեսակի և չափերի:  
2) Տանիքի թիթեղներ (кровельное железо) Սիբիրիայի և այլ գործարաններից:  
3) Ցանկն ու խորանարդի գործարաններից:  
Մեծ բանակութեամբ գտնվող իրող զիջում է արվում: Ընդունվում են պատուէրներ  
Անդրկովկասեան երկաթուղու բոլոր գծերի վրա յանձնելու պայմանով:  
Նօփօրոսիսի Գիւնգիլ ցեմէնտը առաջարկվում է վաճառող գնորդներին Չարա բուրի  
վաքսուն կօպէկ Թիֆլիսի կայարանում, իսկ ընկերութեան պահեստից Չորս բուրի եօթնա-  
սուն կօպէկ: (Ե. Կ. Ե.) 5—10

**Պ Ա Հ Ե Ս Տ**  
**Լ ա մ պ ե թ ի, պ ա ս տ ա ռ ն ե թ ի եւ մ ե թ ե լ ի**  
**Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ**  
Թ Ի Ֆ Լ Ի Ս, Դ Վ Օ Ր Գ Օ Վ յ ա փ ո ղ .  
**55000**  
Կտոր պատասաններ զանազան գոյների և ոճի անցեալ 1903 թւականից մնացած  
վաճառվում է 30% մինչև 60% զիջումով ծախու գնից:  
Օտարաբարացիների պատուէրները շուտափոյթ կը կատարվին ամենաճշգու-  
թեամբ, միայն խնդրվում է ուղարկել սենսակների ճիշդ չափը:  
Հեռախոս № 238. (24 յ. 18 օ. 1, 22)

**ԿԻՆԱՄԱՅԻՆԵՐ**  
եւ ուրիշ ռետիկ գործուածքների խաւար  
**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ** պ ա ղ ե լ ի  
(GRAND-PRIX)  
**ՊԱՐԻՅԻ ՑՈՒՑԱԶՆԱԳԻՏՈՒՄ**  
արժանապա. Ռուսաստանի համար  
**ՄԻՄԻԱՅՆ**  
Ռեժիսորներ  
**ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱՆ**  
ը կերպով Մ. Պետրովսկի, որ հիմնված է  
1860 թ.ին:  
Խնդրում է ուղարկել կրկնաթիղի գնած ժա-  
մանակ ուշը պարձնել նրա անի գործունիքի վրա,  
մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան թւա-  
կանի վրա — 1860. և **G. PETER-**  
**ԵՄԻՆ** բառի վրա՝ կարմիր եւանկիլան  
մէջը (գործարանի գործունիքի):  
Մեծ քանակութեամբ վաճառում է  
**„ՆԵՕՊՈԼԻՆԵՆԻ“**  
Աւետարան Տաւը  
Ս. Պետրովսկի, Մոսկովսկի, Քաղաք, Օգոստ-  
նով, Եկատերինբուրգում, Բուրգովսկի, Բալթիկում, Զալցբուրգում և  
**Թ Ի Ֆ Լ Ի Ս Մ Ի**

